

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԿԻԼՊԵՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

1962 — 1963 Տարեբաժանի

Ա) Պատմական ամփոփ ակնարկ. — Հանգուցեալ մեծանուն բարերար Գալուստ Կիւլպէնկեանի իշխանական նուիրատուութեամբ կառուցուած է Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Կիւլպէնկեան Մատենադարանը, և այս պանծալի լուսոյ վառարանն ու նուիրական հաստատութիւնը պիտի մնայ իբրեւ յաւերժական կոթող Սիոնի բարձունքին, մշտնջենաւորելով համայն հայ ժողովուրդին երախտագիտական զգացումները անոր բարեյիշատակ հիմնադրին նկատմամբ: Մատենադարանին հիմնարկէքի օրհնութիւնը կատարուած է 1929 Հոկտեմբերին, ձեռամբ Երջանկայիշատակ Տ. Եղիշէ Պատրիարք Դուրեանի: Շինութիւնները կ'աւարտին 1931ին, իսկ հանդիսաւոր բացումը կը կատարուի 1932 Հոկտ. 23ին, Ս. Թարգմանչաց տօնին առթիւ, նախադասութեամբ Երջանկայիշ. Տ. Թարգմ Պատրիարք Գաւաղեանի: Սոյն դրոպալուրը կանգնած է ի յիշատակ Գ. Կիւլպէնկեանի հանգուցեալ ծնողաց՝ Սարգսի և Տիրուհւոյ, և ամէն տարի, Ս. Թարգմանչաց վարդապետաց աշնանային տօնին — Տօն ազգային և եկեղեցական ի յիշատակ գիւտի նշանագրաց Հայոց և Թարգմանութեան Ս. Գրոց — յետ Ս. Պատարագի, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կը կատարուի մասնաւոր հոգեհանգստեան պաշտօն՝ Մեծանուն Բարերարին և իր ծնողաց հոգիներուն համար:

Բ) Դասաւորման դրուբիւն գիւրբիւր. — Մատենադարանի գիրքերը դասաւորուած են Տառնորդական Դրութեամբ որ ընդունուած է որպէս գիտական արդիական դրութիւն, աշխարհաճակ Մատենադարաններու մէջ կիրարկուելով: Գիրքերը ղեկավարուած են պոզպատեայ դարակներու մէջ, յառկապէս բերուած Ամերիկայէն. սակայն գիրքերու թիւին արագ աճումով՝ հասկնալի կը դառնայ դարակներու պակասը: Երկայիս Մատենադարանի գիրքերու, թերթերու և հանդէսներու ընդհանուր գումարն է մօտաւորապէս 50,000, պատկառելի թիւ մը, և Կիւլպէնկեան Մատենադարանը կը ճանչցուի իբրեւ հայկական երեք մեծագոյն մատենադարաններէն մին (միւս երկուքն են Վինետիկի և Վիննայի Միթիթարեաններու Մատենադարանները) Սփիւռքի մէջ: Կը ստանանք շուրջ 250 տեսակ թերթ, հանդէս, և լին., որոնց կէսը հայերէն լեզուով, իսկ մնացեալը օտար լեզուներով, առաւելարար անգլերէն: Այս թերթերուն և հաւաքածոները ամբողջացուելէ ետք կը կազմուին և կը ղեկավարին թերթերու և հանդէսներու յառկացուած բաժնին մէջ: Այս թերթերուն մեծ մասը կը փոխանակուին Պատրիարքարանիս պաշտօնաթերթ «Սիոն»ի հետ, մնացեալները կը ղրկուին ձրի: Յիշեալ հաւաքածոները կոչուած են մեծ գիւրութիւն ընծայելու պատմութեան ուսանողին և մեր ժամանակակից պատմութեան կարեւոր անցքերն ու դէմքերը վերլուծել փորձողներուն:

Գ) Տեղեկագիր 1962-63 Տարեբաժանի. — Ինչպէս ամէն տարի, այս տարեշրջանին ևս Մատենադարանի ընթերցողներու, պրպտողներու և այցելուներու թիւը անցաւ 3000ը: Անոնք ըլլան հայ թէ օտար, միշտ ալ հիացումով արտայայտուած են Մատենադարանի մասին: Սոյն տարեշրջանին նուէր ստացած ենք 623 անուն գիրք, որոնց 330ը հայերէն լեզուով: Նուէր ստացուած գիրքերու անունները կանոնաւոր կերպով կը յայտարարուին «Սիոն»ի կողքին վրայ: Այս աթիւ, կրկին անգամ ըլկերպով կը յայտնենք մեր խորին շնորհակալութիւնները ըստ անոնց՝ որոնք գրքի լալով կը յայտնենք մեր խորին շնորհակալութիւնները ըստ անոնց՝ որոնք անոնց հաւանակութեամբ կամ այլ կերպով սատարեցին Մատենադարանիս ձեռնարկին: Նուիրատուութեամբ կամ այլ կերպով սատարեցին 100 կտոր գիրք, որոնցմէ 87ը հայերէն են: Իսկ փոխանակութեամբ ստացած ենք 100 կտոր գիրք, որոնցմէ 87ը հայերէն են: Իսկ փոխանակութեամբ ստացած ենք 51 գիրք, 27ը հայերէն՝ մնացեալը անգլերէն և ֆրանսերէն լեզուներով: Գնած ենք 51 գիրք, 27ը հայերէն՝ մնացեալը անգլերէն և ֆրանսերէն լեզուներով:

ՍԱՀԱԿ ԳԱԼԱՅԵԱՆ

Քարտուղար Կիւլպէնկեան Մատենադարանի